Ձեր 18.12.2015թ. “Երևան Ջուր”, “Հայջրմուղկոյուղի”, “Լոռի-ջրմուղկոյուղի”, “Շիրակ-ջրմուղկոյուղի” և “Նոր Ակունք” փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու (վարձակալի ընտրության) գնման ընթացակարգի մասնակցին ներկայացվող նախառակավորման հայտարարության հետ կապված լրացուցիչ պարզաբանումներ և տեղեկություններ ստանալու հարցումների վերաբերյալ ներկայացվում են հետևյալ պարզաբանումները՝

Հարց՝

1. Եթե անձը պատշաճ լիազորված է հանձնելու և ստորագրելու մասնակցի կողմից նախապատրաստված Նախառակավորման հայտը, ստորագրելու նախառակավորման գործընթացի հետ կապված ցանկացած պահանջվող և/կամ օժանդակ փաստաթուղթ, արդյոք այդ փաստաթղթերի հայերեն տարբերակները պետք է ունենան նոտարական վավերացում, թե լիազորված անձի ստորագրությունը բավարար է:

Պատասխան՝

1. Խնդրում եմ հարցը ձևակերպել հստակ, թե որ փաստաթղթերի նոտարական վավերացման մասին է խոսքը:

Հարց՝

2. Եթե լիազորված անձը ֆիզիկական անձ է, սակայն, միաժամանակ հանդիսանում է ընկերության տնօրեն, արդյոք նա պետք է կնքի ներկայացվող դիմումը և հայտարարությունները, եթե այո, ապա արդյոք նա կարող է կնքել իր ընկերության կնիքով:

Պատասխան՝

2. Եթե լիազորված անձը ֆիզիկական անձ է, ապա կնիք ունենալ չի կարող և ստորագրությունը բավական է:

Հարց՝

3. Ընթացակարգի 11-րդ կետով նկարագրված է հայտատուի համապատասխանությունն ապահովելու նպատակով ներկայացվող տեղեկությունների ֆորմատը: Տեղեկությունների հավաստիությունը ապահովելու համար, ըստ ընթացակարգի 10-րդ կետի, պետք է ներկայացվեն այդ

տեղեկությունները հիմնավորող փաստաթղթեր: Արդյոք հիմնավոր փաստաթուղթ կարող է համարվել մասնակցի պայմանագրային կողմի կողմից տրված հավաստագիրը, որում կարտացոլվեն ծրագրի հիմնական այն տվյալները որոնք պահանջված են Ընթացակարգի 11-րդ կետով:

Պատասխան՝

3. Այո, եթե տրված հավաստագիրն իր մեջ արտացոլում է ծրագրի հիմնական այն տվյալները որոնք պահանջված են Ընթացակարգի 11-րդ կետով՝ բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների:

Հարց՝

4. Եթե հնարավոր է, խնդրում ենք տրամադրել այն փաստաթղթերի անվանացանկը, որոնք անհրաժեշտ է անպայմանորեն ներառել նախառրակավորման հայտի փաթեթում:

Պատասխան՝

4. Նախառրակավորման հայտի փաթեթում ներկայացվող փաստաղթերի ցանկը սահմանված է մրցակցային երկխոսության ընթացակարգի հայտարարությամբ:

Մրցակցային երկխոսության ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի քարտուղար,
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության
ֆինանսական բաժնի պետ, վարչության պետի տեղակալ
Ա. Մնացականյան 21.12.2015թ